

որ հոգ տանէ՝ փոխանակ մատուցի, Ս. Նշանը քաղաք բերած օրը եկեղեցու բակում ձրի թէյ տալու, և նա, շնորհակալ եմ, յօժարութեամբ կատարեց այդ խնդիրը։ Եւ յանձնարարեցի երէց-փոխներին՝ այն եկեղեցիներում, որոնց մէջ Ս. Նշանը բերելու առթիւ բազմութիւն պիտի ժողովէր, կարողանա թթու և արակիչ պահել, ախտահանութեան գոյնութիւններ գործ դր-նել, որչափ կարելի է։ Իմաց տուի վերջապէս պ. Նահանգապետին, որ քաղաքական իշխա-նութեան կողմից ևս կարեւոր համարված կար-գադրութիւնները լինեն։

Այսպէս, Ս. Նշանը բերվեց Նրեան, և երբ հանդիսաւոր թափօրով Ս. Պետրոս և Պողոս եկեղեցին հասցրին, մի քանի խօսքով խրա-խոյս կարգադրեց հետեւող խումբ բազմութեան, յիշեցրեւ, թէ այդ հնաւանդ սրբութիւնը դա-րեւիք ընթացքում քանի քանի աղէտներով վկայ է եղել, որչափ աղի արցունքներ թափվել են ու թափվեցան այժմ նրա առաջ, և յոյս յայտ-նեցի, որ վերին նախախնամութիւնը կը լսէ հաղորատոր ազօթող մարդերի և ճշմարիտ հա-ւատացողների ջերմ աղերասները, և անագե-րոյն ցաւը տեղի կը տայ, բայց յորդոր կար-գացի կրկին՝ անփոյթ չը նստել, այլ միաբան գործունէութեամբ այդ ցաւի դէմ ենել, իբրեւ մի իրական թշնամու դէմ, և աշխատել տա-լալի նրան՝ խոհեմութեան, գոյնութեան և բարոյական գործութեան բոլոր միջոցներով այն ջերմեանութիւնը, որ հանդիս է գալիս վտանգի բազմին, Ս. Նշանի առաջ՝ արտայա-տել դէպի կարօտեալ և անհիշեցիկ եղբայրը ցոյց տուած քրիստոնէական սիրովն ու ողորմա-ծութեամբ։ Եւստիորաբար չը մտածել իր կամ իր հոգ-հոգեւոր գլուխն ազատելու մասին միայն, այլ աներկիւղ արտով օգնութեան հաս-նել ընկերին, հասարակաց աղէտի հանդէպ երեւան հանել հասարակական լաւագոյն տրա-մադրութիւնը։ Նոյն ոգով խօսեցի նաեւ յա-ջորդ երեկոյեան 1. Լուսաւորիչ եկեղեցում, ուր տարանք հանդիսով Ս. Նշանը։

Հիշեցարթի օրը, երբ Ս. Նշանը պիտի վե-րադարձնէիք Սեան, եւ կարգադրեցի յիշաւի, որ թեմական դպրանոցի աշակերտներին եկե-ղեցի տանեն։ Ահազին բազմութեան ներկա-յութեամբ, որի մէջ պակաս չէին նաեւ օտար-ներ, հանդիսաւոր պատարագ էր մատուցվում ս. Լուսաւորիչ եկեղեցում, և եւ անպատեհ համարեցի, որ մի քանի տիրացունք սպասա-ւորեն այնտեղ, և ոչ դպրանոցի երգեցիկ խում-բը։ Եւստիորաբար հայերը փակում էին իրանց խանութները, թողնում իրանց գործը և շտապում եկեղեցական հանդիսին մասնակ-ցելու, և եւ անպատեհ համարեցի, որ այդ ժամին հայոց հոգեւոր դպրանոցում դաս լինի, որ ժողովրդի գաւառները չը լինեն նոյն տե-ղում, ուր ժողովուրդն էր։ Իմ ուսած գիտու-թիւնը ինձ չէ վարժեցրել պարտականութիւ-նից խնայ տալ այն դէպքում, երբ վախ կայ, թէ ուսումնական մարդիկ ինձ տգիտութեան պաշտպան կը հռչակեն։ Եթէ ճիշտն է, թող թափանց դպրանոցի վիճակը հետաքրքրվում է, պէտք է իմացած լինի, որ դպրանոցի վար-չութիւնը ամեն հնարաւոր միջոցներ ձեռք է առել վտանգի առաջ։ Եւստիորաբար Սեան և մարտնչական կանոնները գործ է դրել ամե-նաբարձակ չափով, խօսքեան դեռ քաղաք չեկած, սկսել է աշակերտներին եւսացրած ջուր տալ, առանձին բժշկի և հրաւիրել երբեմն երբեմն դպրանոց այցելելու, աշակերտներին առողջապահական խրատներ տալու, բաշխե-րելու և հիւանդութեան դէպքում անմիջական օգնութեան հասնելու համար։ Եւստիորաբար յատուկ յանձնարարել է կազմվել դպրանոցի առողջապահական վիճակի վրա հսկելու հա-մար։ Թէ տեսնուի և թէ ուսուցիչները յաճախ առողջապահական դասեր են խօսել աշակերտ-ներին, կարեւոր հրահանգներ և խօսքայի դէմ գրված բրօշուրներ նրանց ձեռքը տուել, որ պէս գի կարողանան նաեւ տանը հարկաւոր գոյնութիւններ գործ դնել և իրանց շրջա-պատակներին նոյնը հանգստեցնել, — և գոհու-թիւն Աստուծոյ, չէ նայելով որ դպրանոցի աշակերտները ժողովրդեան ամենահասարակ ու չքաւոր դասի գաւառներ են և ապրում են խիստ անպատեհ պայմաններում, նրանց մէջ խօսքայով հիւանդութեան ոչ մի դէպք չէ պատահել։

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ամենայն հայոց վեհափառ Կաթողիկոսը ե-րէկ, դեկտեմբերի 8-ին, Կարսի երկաթուղով երեկոյեան զնացքով ժամանեց Թիֆլիս։ Վե-հափառին դիմաւորեցին հոգեւորականութիւնը քաղաքագլուխը, Թիֆլիսի ոստիկանապետը, և բազմաթիւ հասարակութիւն։

Պետերբուրգի քաղաքային Ուպրավան, քնն-նելով ձայնաւորներից շատերի կողմից տրված յայտարարութիւնները՝ քաղաքային ինքնավա-րութիւնների գործիչներին համառուական աջո-ղով դուռնարելու անհրաժեշտութեան մասին, նոյնպէս կողմնակից հանդիսացաւ այդ ժողո-վին։ Միայն Ուպրավան, չը մասնկող ծրագրի մանրամասնութիւնները մէջ, նախ սահմանա-վակեց այդ ծրագիրը լոկ քաղաքի տնտեսա-կան կենսից դանդաղ հարցերի շրջանով։ Նրա սկզբնական ծրագրի վերջում աւելացված էր «և վարչական հարցեր»։ Բայց վերջնական

քննութեան ժամանակ Ուպրավան անհրաժեշտ համարեց ծրագրի միջից հանել «վարչական կամ աղմկիւնտրատով» հարցերը։ Ուպրավան, բազմապէս լինելով ներքին գործերի մինիս-տրութեան պաշտօնեաներից, անյարմար հա-մարեց իր համար մտնել աղմկիւնտրատով հարցերի քննութեան մէջ։ Բայց «НОВОСТИ» լրագիրը լսել է, որ Ուպրավան կը համաձայն-վի անպայման Դուռնոյի հետ, եթէ այդ վե-րջինը, ինչպէս սպասում են ամենքը, աւելի լայն ծրագիր կը ներկայացնէ վերեւում յիշված համաժողովի համար։

Դեկտեմբերի 7-ին Թիֆլիսի նորահաստա-քաղաքագլուխ պ. Բ. Վերմիլեանը ներկայա-ցաւ Թիֆլիսի նահանգապետին և փոխ նա-հանգապետին, իսկ նոյն օրը ժամը 2 1/2-ին քաղաքային վարչութեան մէջ տուեց սովորա-կան երեւոյթ, որից յետոյ նրան դիմեց ուպ-րավայի բոլոր ծառայողների կողմից պ. Զրէ-լանով և քարի գաղութատ մարկից։ Պ. Վերմի-լեանը զգացված ճառ խօսեց և յոյս յայտնեց, որ քաղաքային ինքնավարութեան բոլոր ծա-ռայողները համբար լսեց և միահամուռ գործելիս, քաղաքի բոլոր գործերը աշող կընթանան։

Դեկտեմբերի 7-ին Թիֆլիսի նահանգական վարչութիւնը Թիֆլիսի գաւառական բժշկի պ. Յէրէթէլիին ուղարկեց Բօրչալուի նահանգը, որպէս զի հսկողութիւն հաստատէ Երևանի նահանգից և խօսքայով վարակված այլ տե-ղերից եկածները վրա։

Կարմիր Սաչի ընկերութեան Ալեքսանդր-ալի ճիւղը որոշել է ամեն օր տպագրել ուսական գործակալութեան հեռագրերը և ծախել։ Ամեն մի օրինակի գինը նշանակված է 5 կօպէկ։ Այդ ձեռնարկութիւնից ֆնացած գումարը կը օգտագործվի ինքնավարութեան և հեռաւոր Ա-րեւելում մարտնչողներին ընտանիքներին օգ-նութիւն հասցնելու գործին։

«НОВОСТИ» լրագիրը հաղորդում է, որ ներ-քին գործերի մինիստրը Պետերբուրգի Տնտե-սագիտական ընկերութեան իրաւունք է տուել տնտեսական հարցերի մասին գիտական գե-կուցումներ կարդալու։ Երկու տարի առաջ այդ իրաւունքից զրկվել էր ընկերութիւնը հանգուցեալ մինիստր Յօն. Պէլեկին։

Պետերբուրգի հեռագրում են «Р. С.»-ին. «Երէկ, դեկտեմբերի 1-ին Տիբերի քաղաքային դուռնան միաձայն որոշեց խնդրել ներքին գործերի մինիստրին թոյլատրել քաղաքա-գլուխների և քաղաքային ինքնավարութիւն-ների ներկայացուցիչներին ընդհանուր ժողովը»։

ԳԱՆՁԱՎԻՅԻՑ մեզ գրում են. «Գանձակի նա-հանգական դատարանը նորեւս կայացրած իր մի վճռով ազատեց մեր գաւառը մի շատ վը-տանգաւոր աւազակից, Սաչակապ գիւղի բնա-կիչ Համբօից, որը անցեալ յուլիսին Գանձա-կում գողութեան ժամանակ գործել է մի սպա-նութիւն ու ընդմիջ յանցանքի տեղը։ Նա դա-տապարտված է տաժարանները աշխատանքների 12 տարի ժամանակով։ Համբօն վտանգաւոր էր նրանով, որ նա բացարձակ չէր գործում, ինչպէս սովորական դաշադները, այլ գաղտա-գողի, արտաքուստ խաղաղ գիւղացու էր նը-ման։ Մանր յանցանքների համար բանտում նա շատ է նստած։ Սպանութիւններ գործել է մի քանի հատ։ Վերջինի համար միայն տու-ծեց։ Երբեմնակի նա անհետանում էր. այն ժամանակ լուրեր էին տարածվում գիւղերում, որ «Համբօն դուռն է ընկել»։ Նրանից վախե-նում էին իբրեւ որշից դուռն եկած մի գաղա-նից։ Նրա անուշով վախեցնում էին երեխա-ներին։ Համբօի սխարագործութիւնները աշո-ղութիւնը բացատրվում է նրանով, որ նա ու-նի ազդեցիկ հովանաւորներ թէ գիւղերում և թէ քաղաքում. հովանաւորները Համբօի «աշ-խատանքից» որոշ բաժին ստանում էին, ի հարկէ»...

ՍՏԱԻՐՕՊՈԼԻՑ մեզ գրում են նոյնիմբերի 29-ին. «Երէկ, նոյնիմբերի 28-ին, կայացաւ Պետերբուրգում դուռնութիւն ունեցող՝ «Գանձանց գիւղատնտեսական կրթութեան նպաստող ըն-կերութեան Ստաւրօպօլի բաժին» առաջին ընդհանուր ժողովը, որը զբաղվեց ընտրու-թիւնների մէջ։ Այդ համակրելի ընկերութիւնը, որի մասին դեռ անցեալ տարվանից խօսվում էր, միայն հիմա հնարաւորութիւն ունի իր գործունէութիւնը սկսելու, որովհետեւ կանո-նադրութիւնը նոր է հաստատվել։ Այդ կանո-նադրութիւնից մի օրինակ ուղարկելով «Մը-

շակի» խմբագրութեան՝ չեմ կարող ցանկու-թիւն չը յայտնել, որ նոյնանման ընկերու-թիւն հիմնվել նաեւ Թիֆլիսում։ Մեր հայու-հինքը, մանաւանդ, չեն հետաքրքրվում գեւ-ղատնտեսութեան նման կարեւոր և կենսական հարցով և այդ տեսակետից մի քայլ յետ են ֆնացել իրանց վրացի բոյրերից։ Միթէ չէ կարելի հայ կանանց այդ ուղղութեամբ գործի հրաւիրել, օրինակ, այնպիսի գիւղատնտեսա-կան կենտրոններում, ինչպիսին են Երևանը, Ալեքսանդրօպօլը կամ Գանձակն է։ Ցանկալի է օրինակ վերցնել Գուրախի վրացուհի-րից»։

ՆՈՐ-ԲԱՅԱՆՑԻՑ մեզ հաղորդում են. «Գա-ղաքի ընկերութիւնը յուսանաւորված է։ Այժմ մեղանում բուն է գրել տաւարի ժանտաւաւը, որը չը նայած կառավարութեան ձեռք առած ամենախիստ միջոցներին, օրէցօր լայնացնում է իր ծաւալը, այնպէս որ մեր քաղաքը, երկր շուտով կը զրկվի բոլոր անասուններից, ո-րովհետեւ հիւանդացող անասունները իսկյն պահանջում են անասնաբույժի կարգադրու-թեամբ։ Ժանտաւաւը շուտ կանցնէր, եթէ ժո-ղովուրդը կանոնաւոր կերպով պահպանած լի-նէր կարանտինի բոլոր պայմանները, իսկ այժմ, ինչպէս լսում ենք, մօտակալ գիւղերում նոյնպէս երևացել է այդ հիւանդութիւնը. հա-նարակութիւնը աչքի առաջ ունենալով այն հանգամանքը, որ հիւանդ անասունները մեծա-մասնութիւնը մի քանի օրից յետոյ բոլորովին առողջանում է, նպատակայարմար է գտել միջ-նորդը, ուր որ հարկն է, անասունների համար հիւանդացող բաց անել։ Լսում ենք նոյնպէս, որ Դարբաշիակ կողված գաւառամասի մի քա-նի գիւղերում երեխաների մէջ ծաղիկ հի-ւանդութիւն կայ»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՆԻՍԱՄԻ ԶՈՐԻՑԸ

Պատնիսի կախարայի մասին Տօկիոյց հեռագրում են «Köln. Zeit.» լրագրին, որ հապօնական ուղեւորութիւնը անպէտք է դարձրել ծառայութեան համար 4 ուսական զբահուր, 2 կըէսէր, 1 թղանթածիւղ և 1 ախանաւաւ։ Աւելորդ է համարված այսուհետև ուղեւորելի էսկադրան։ Այժմ պէտք է ուղա-կոծել քաղաքը։ Հիմք կայ ենթադրելու, որ ուղեւորութիւնը ֆնասել է անթիւ հեռագրի կայարանը Ոսկեսարի մօտ և վառօղանոցը վառվել է։ (Ноб.)

Ուսական էսկադրայի հարուածումը շա-րունակվում է Տօկիոյց հաղորդում են Բեր-լինի «Լօկալ-Անցիլդը» լրագրին, որ «Սե-վաստապօլ» նաւը ցերեկը կանգնած է նաւա-հանգստում խարխիւ ձգած, իսկ գիշերը վե-րադառնում է նաւահալ գիւղը։ Հիմք կայ են-թադրելու, որ հապօնական ուղեւորը պայ-թում էին ուսուց գրաւաւորների մէջ։ Թէ և հապօնական իշխանութիւնները պաշարող բա-նակի մէջ համարում են ուսական էսկադ-րան անպէտք գործողութեան համար, սակայն շարունակում են նրա ուղեւորութիւնը։ Սակայն ախանաւաւը նաւատորմի մասին կասկածներ կան։ Եւստիորաբար արտաւերջին հարուածում է նաւահանգստի ամեն սի անկիւնը, որովհետեւ յայտնի չէ որտեղ են կանգնած ախանաւա-ւը։ (Ноб.)

Օգոստոսի 10-ի դժբախտ ելքից յետոյ, ասում է վերոյիշեալ լրագիրը, ուսական էս-կադրան յայտնի չէ ինչ պատճառով դատա-պարտվել էր անգործութեան, թէ և նա կարող էր աւելի օգուտ բերել, դուռն գալով նաւա-հանգստից, քան ֆնալով նրա մէջ մեռեալ կէ-տի վրա և ունենալով անկասկած ոչնչանալու հեռանկար։ Եթէ ուսական էսկադրան, փո-խանակ անպատեհ կանգնելու նաւահանգ-ստում, կարողանար ոչնչացնել մի կամ նոյն իսկ երկու հապօնական զբահուր, դա արդէն մեծ հարուած կը լինէր հապօնացիների հա-մար։ Դժուար է մտածել աւելի տիրալի վախ-ճան մի էսկադրայի համար, որը, եթէ գործը լաւ տարվէր, կարող էր մեծ հոգսեր պատճա-ռել հապօնացիներին։ Եւ այդ ցանկութիւն է մա-նաւանդ այն պատճառով, որ հապօնական ծո-վապետը իր գործողութիւն ներքին մէջ ամենին ցոյց չը տուեց առանձին հանձնարարութիւն կամ վարպետութիւն։ Եթէ Տօգօն ձեռք բերեց մի քանի արդիւնք, այդ էլ շնորհիւ ողուաց ծովապետների։ (Ноб.)

ՄԻ ՆՈՐ ՇԱՅ ԴԵՐԱՍԱՆ

Պարիզում, թատերական քննադատների միա-համուռ կարծիքով՝ մի հայ գերասան տարել է

մեծագոյն յաղթանակներից մէկը։ Պ. Մաքսու-տեան՝ Պարիզի կօսերվատորիայի տարեկան մրցման ստացել է ողբերգութեան առաջին մրցանակը իր բոլոր ֆրանսիացի ընկերների մէջ։ Դա մի այնպիսի խոշոր աշուղութիւն է, որով իրաւամբ, կարող է պարծել ոչ միայն ինքը պ. Մաքսուտեան, այլ և իր ցեղը։ Այս յաղթանակը մեզ մխիթարում է խեղճ Գրիգոր Կիւլպէնկի կորստից։

Պարիզի համաբեւս ամբողջ մասնուր արձա-նագրեց մեր ցեղակցի այդ փայլուն յաղթա-նակը և եղան նոյն իսկ թերթեր, որ իբրեւ օրվայ հերոսի տպագրեցին նրա պատկերը։

Որպէս զի ցոյց տանք մեր ընթերցողներին, թէ հրքան մեծ է եղել պ. Մաքսուտեանի ա-շուղութիւնը և որքան միաձայն նրա գնահա-տութիւնը, առաջ ենք բերում այդ մասնուր օրգանների կարծիքը։

«Figaro»-ի մէջ, պ. Էմանուէլ Աւէն գրում է. «Պ. Մաքսուտեան շատ արդարացի կերպով ստացաւ ողբերգութեան առաջին մրցանակը։ Այդ երեւոյթաւորը, որ մի քիչ չափազանցում է ջղային դողդոջութիւնը, եւսաւ ունի և ա-րուստագէտի խառնուածք, տեւալքամէնտ։ Նա մի հայ է արդէն, և իր երկիրը կարող կը լինէր ողբերգութեան արտագրել, եթէ ոչ այն երկիրը, որ արեւնոտվեց այնքան զարհուրելի դէպքերով»։

«Matin»-ի թատերական քննադատը պ. Ռընէ Մէզրուա, որ յայտնի գրագէտի համբաւ էլ ունի, գրում է.

«Պ. Մաքսուտեան—որին պէտք է մեղադրեմ այն բանում, որ նա իր պատուական վարպե-տի (Սիլվէնի *) չափազանց ցուցադրեց եղաւ ու չը կարողացաւ բաւականաչափ խոյս տալ այն կաղապարից, ուր նա խմբվել է, Տրիբունէի մեծախօսութեան մէջ ունեցաւ դառնութեան, ցաւի, իսկ և մորմորի գեղեցիկ շնչերը»։

«Journal»-ի մէջ, պ. Կատիւ Մէնդէս, Պա-րիզի ամենահեղինակաւոր թատերական քնն-նադատներից մէկը, որ մի և նոյն ժամանակ մի նուրբ բանաստեղծ է և տաղանդաւոր թա-տերագիր՝ գրում է.

«Պ. Մաքսուտեան՝ համարեա միջակ կիների դպրոցի Արիստօֆի դերում, միանգամայն նշա-նաւոր հանդիսացաւ Իթալիոսի Տրիբունէի մէջ։ Ահ, որքան գեղեցիկ, բոժանտիկ դերասան, ուժեղ, յուզված, ժուժկալ, որ էֆֆէկտները աւելի գգալի դարձնելու համար կամաւոր դադարներ է առնում, և մի պարզութեամբ, որ ամբողջապէս ներթիւններով է կազմված՝ նրան աշողվում է լիակատար կերպով արտա-յայտել մի շատ բարդ և յուսանաւոր հոգի։ Եւ իրաւում կարծում եմ, որ պ. Մաքսուտեա-նին սպասում է մի հոյակապ ապագայ դրա-մայի մէջ»։ «Ժուրնալը» տպել էր և պ. Մաք-սուտեանի լուսանկարը,

«Echo de Paris»-ում պ. Յրանսուա դը Նիւն, յայտնի վիպագիրը ասում է.

«Պատուաւոր մրցանակը պ. Մաքսուտեանին տրվեց։ Այդ պարտը ողբերգական դրոշմ ունի և ողբերգական ձայն. դիտել ամեն ինչ, որ կարելի է սովորել. յուսանք որ նա կը սովո-րի նոյնպէս մոռանալ մի քիչ իր աղէն սո-վորածից։ Մի ողբերգու է, որ ապագայ ունի, եթէ նրանից չը պահանջեն ոչ շատ փայլ և ոչ էլ շատ ինքնատուութիւն... Պ. Մաքսու-տեան պ. Սիլվէնի հետեւում էր հեղինակա-ւոր և ինքնաբույր եղանակով»։

Gaulois-ի մէջ պ. Ֆելիքս Դիւլէնէլ գրում է. «Ողբերգական առաջին մրցանակը տրվեց պ. Մաքսուտեանի, քանի որ քաղաքային ինքնավարութեան մի երեւոյթաւոր դեր, որ մի քիչ յիշեցնում է հանգուցեալ Օթ-բանին։ Արտասանում է լաւ և ճիշտ. իմա-նում է և վարել իր ձայնը։ Ուր ազդեցու-թիւն գործելով խաղաց «Բիբլիոտոյի» Տրի-բունէի տեսարանը»։

Ce vieillard m'a maudit...

Մյո ծերունին ինձ անիծեց... Պ. Սիլվէնի լաւագոյն աշակերտներից մէկն է. աշակերտի ետեւից երևում է պարտաւորէն վարպետի ուղեւորութիւն սիրուեալը։ Պ. Մաքսու-տեան իր մրցանակն ստացաւ միաձայն հաւա-նութեամբ և արժանի էր դրան»։

Gil Blas-ում պ. Նօդիէն գրում է. «Ամենքը համաձայն էին, որ պ. Մաքսուտեան բացար-ձակապէս արժանի էր իրան շնորհված առաջին մրցանակին։ Կարելի է նրան մեղադրել նրա-նում, որ նա չափազանց ցոյց է տալիս իր վար-պետից, Սիլվէնից կրած խոր ազդեցութիւնը։ Նրա գիտութեամբ լուռութիւնները մի քիչ եր-

*) Պ. Մաքսուտեան կօսերվատորիայում աշակերտել է Սիլվէնի, որ Կօմէդի-Ֆրանսէզի լաւագոյն դերասան-ներից մէկն է։

կար են: Բայց նա հազուադեպ ըմբռնողութեամբ արտասանեց «Բիզոլտոյի» Տրիբունը: Դեռ անհետնալիս իմաստութեամբ վեր հանեց ոտանաւորները արժէքը: Նրա անկեղծութիւնը յուզեց ունկնդիրներին: Լաւ ձայն ունի: Կատակերգութեան մրցման մէջ պ. Պարո և պ. Մաքսուտեան ստացան առաջին յիշատակութիւն, պ. Մաքսուտեան շատ լաւ տարբաւ Կիւնեի դպրոցի մէջ Արնոլֆի դերը: Բայց նրա լուծութիւնները շատ երկար էին, որով հատուածի շարժումը մի քիչ դանդաղեցրեց: Առանց այդ սխալին, նա կը ստանար անկասկած կատակերգութեան մէջ մրցանակը, շնորհիւ իր խոր յատկութիւններին:

Le Theatre — մասնագիտական հանդէսը խօսեցով Մաքսուտեանի յաջողութեան մասին, աւելացնում է. «Տեսնելով աշակերտին, կարելի է չը մտաբերել վարպետին»:

«Femina» — կանայք օրգանը, այն աստիճան ոգևորութեամբ խօսում է Ջորձիայի հայ երիտասարդի յաղթանակի մասին, որ նա չէ վարանում ասելու, որ պ. Մաքսուտեան իր մի-միկայով «կարող է նախանշել շարժել անգամ յօւնքներ», իտալացի ժամանակակից ամենամեծ ողբերգակիւն:

Պատկերազարդ ամսագրերից շատերը հրատարակել են պ. Մաքսուտեանի լուսանկարը: Նրանցից մէկը, «Illustration»-ը, տպել է մի շատ արտայայտիչ նկար, որ ներկայացնում է պ. Մաքսուտեանին Տրիբունէի դերում: Իսկ այսօրեայ փայլալից գնահատութիւնները իբրեւ պատկեր, աւելացնեն, որ պ. Փրիմատի Օդէօնի՝ պարիզական երկրորդ ազգային թատրոնի տնօրէնը՝ մեր հայրենակցին հրաւիրել է արդէն իր այդ տարվայ խմբի մէջ:

Ինչպէս երևում է, պ. Մաքսուտեան անցել է երկու տեսակ ըննութիւն, ողբերգակ և կատակերգակ դերասանի ըննութիւն: Առաջին ճիւղի մէջ, նա՝ քննադատների միահամուռ կարծիքով՝ արժանի է հանդիսացել առաջին մրցանակի, իսկ երկրորդի մէջ ցոյց է տուել գնահատելի ընդունակութիւններ: Քննադատները համաձայն են այն կէտում, որ մեր հայրենակիցը զեռ եւ կրում է իր վրա իր ուսուցչի՝ Միլլէնի ազդեցութիւնը: Դոմէսթիկատորիան նոր աւարտող մի դերասանի համար այդ շատ բնական է: Երբ նա մտնէ փորձական կեանքի մէջ, երբ առիթ ունենայ իր տաղանդը մշակել իր սեփական ջանքով, պ. Մաքսուտեան անկասկած կը գտնէ իր կատարելա ինքնուրոյնութիւնը: Եթէ նա իր պարպետի անգոյն ցոյցը միայն եղած լինէր, եթէ մրցման մէջ ցոյց տուած չը լինէր արուեստագէտի ուժեղ խառնուածք՝ աւելացնումէն, նա չէր արժանանալ առաջին մրցանակի և մասնաւոր չէր հրաւիրվի խաղալ Փրանսիական ազգային երկրորդ թատրոնում, ուր անկարող են լինում մտնելու նոյն իսկ իրանք Փրանսիացիները՝ եթէ չեն ցոյց տալիս տաղանդի անսխալի ապացոյց: Ուրեմն մենք կարող ենք միանգամայն վստահ լինել, որ մի քանի տարուց յետոյ, Պարիզի նման մի համալսարանային խառնաշառձ կենտրոնում, պիտի տեսնենք փայլելու հայ տաղանդին, մի տարբեր ձևի տակ, այն է դերասանական ասպարէզում:

Մինչև հիմա մենք ունէինք մի և նոյն Պարիզում, Էտկար Շահինի, Ջաքարեանի նման խոշոր տաղանդներ, որոնք նկարչութեան և փորագրութեան ճիւղերում, ամենահեղինակաւոր ընդհատներին հաստատումով՝ եւրօպական ժամանակակից գեղարուեստի լաւագոյն էջերն էին արտադրել:

Այժմ անսխալ Մաքսուտեանը, որ միայն մի քանի տարի ապրելով Պարիզում, կարող է լինում մրցել իր Փրանսիացի ընկերներին հետ և տանել յաղթանակը: Մի օտարի համար դա շատ մեծ աշդուածիւն է և անսխալ համար էլ մենք չէինք վարանել ասելու, որ պ. Մաքսուտեանի յաղթանակը պատիւ է բերում ոչ միայն իրան, այլ և այն ցեղին, որից ընկել է նա: Մեր ազգակիցը գալիս է մի անգամ էլ ապացուցելու, որ իր ցեղը քաղաքակրթական ամենաբարձր ընդունակութիւններով օժտված մի ցեղ է, որ իր երակներում թագնում է գեղեցկութեամբ, յուզումով, մեծութեամբ սողման, որոնք սպասում են միայն նպատակաւոր պայմաններին, իրանց ամբողջ ուժով փթթելու համար:

Տ. Զաւեն

Պ Ա Ր Ս Կ Ա Ս Տ Ա Ն

Խորհուրդներ Պարսկաստանում: Նոր սաղաքամի քաղաքակրթութիւնը: Ֆինանսական վիճակը: Ռուսական և անգլիական ազդեցութիւնը: Կայսրը և անգլիացիները:

I

Պարսկաստանում ինչ որ խորհուրդներ են լինում... գէթ Հնդկաստանում հրատարակվող

պարսկերէն լրագիրները այդպիսի ակնարկներ են անում: Եթէ հաւատարմաբար լրագիրներին, մասնաւոր կալուստայում հրատարակվող «Հէքն ու Մաթին» պարսկերէն լրագիրին, որի մուտքը Պարսկաստան արգելված էր նախկին սաղաքամի Աթաբեկի ձեռքով, իսկ այժմ ազատ է նոր սաղաքամի էյն-ուլ-Դովլէի հրամանով՝ ուսու-եագծական պատերազմը անգլիկ հետեւներ պէտք է ունենայ Պարսկաստանի համար: Այնուհետ և նոյն իսկ գաղափար իրանը պէտք է վերածնվի. նա պէտք է թօթափէ իրանից անգլիական և ռուսական ազդեցութեան լուծը և սկսէ ինքնուրոյն, վերաստեղծական, բարենորոգչական կեանք: Այս տեսլանքներն են յայտնում Հնդկաստանում և եզրագծում հրատարակվող պարսիկ լրագիրները. նրանք յորդոր են կարգում պարսիկ երիտասարդութեան գնալ Եւրօպա, ծանօթանալ արեւմտեան քաղաքակրթութեան հետ և մտցնել հայրենի երկրում եւրօպական կարգ ու կանոններ:

Միայն լայն ընթացիկները կարող են ազատել Պարսկաստանը իր ներկայ անկեղծ վիճակից: Սակայն կայ և մի կուսակցութիւն, որ ինչդրին այլ կերպարանք է տալիս նա գտնում է, որ Պարսկաստանի բոլոր աղէտները և չարքները գլխաւոր պատճառը այն է, որ նա իր փրկութիւնը սպասում է Եւրօպայից (ներկայ դէպքում Անգլիայից և Ռուսաստանից), եւրօպական քաղաքակրթութիւնից: «Ոչ, ասում են այդ հայրենասէրները» (վարպէտ փէրէյի), մեր երիտասարդութիւնը պէտք է գնայ Եւրօպա, ծանօթանալ արեւմտեան քաղաքակրթութեան հետ միայն այն նպատակով, որ գալով հայրենիք, կուսկէ արեւմտեան-եւրօպական քաղաքակրթութեան հետ:

Այս աղաղակը արձակում են համախառնականները, որոնք գործում են ոչ թէ քաղաքակրթական, այլ կրօնական հողի վրա. նրանց կարծիքով, իսլամը իր մէջ պարունակում է ամեն բան և նա պէտք չունի ոչինչ փոխ անել օտարներէ: Նրանց գործունէութեան միակ նպատակն է թող չը տալ, որ «գեղեցկութիւն»-ով և լինի նա, ուսում թէ անգլիացի, հայ թէ ֆրանսիացի՝ որ և է ազդեցութիւն ունենայ Պարսկաստանի գործերի վրա, միջամտէ նրա գործերին:

Կայ և մի երրորդ կուսակցութիւն, որ բաժանվում է երկու բանակի՝ անգլիասէր և ռուսասէր: Այդ կուսակցութիւնը այն համոզմունքն ունի, որ Պարսկաստանը ինքն թող և տկար լինելով, պէտք ունի յենկել մի զօրեղ պետութեան վրա և վայելի նրա աջակցութիւնը: Սակայն ո՞րը պէտք է լինի այդ պետութիւնը՝ Ռուսաստանը, թէ Անգլիան:

Ռուսասէր բանակը, հինգ ընդունելով այն հանգամանքը, որ Պարսկաստանը, իբր անմիջական դրացի Ռուսաստանի, կապված է նրա հետ ոչ միայն քաղաքական, ստատիսական, այլ և ազգակցական կապերով, որովհետեւ Ռուսաստանում ապրում են և միլիոնաւոր շիա-մահմեդականներ ու նոյն իսկ պարսկազգայնականներ, գտնում է, որ Պարսկաստանը պէտք է որոնէ Ռուսաստանի հովանաւորութիւնը և աջակցութիւնը: Ռուսասէր կուսակցութեան յայտնի ներկայացուցիչներն են Պետերբուրգի պարսից նախկին դեսպան, թիֆլիսցիներին լաւ յայտնի, Կ. Պոլսի այժմեան դեսպան Միլլա Րիզա խանը, որ, հասաւ ամանաբարձր աստիճանների և նոյն իսկ իշխական կոչման և Պետերբուրգի այժմեան դեսպան Մուշիթ-Մուլլը, որ պարսից այժմեան արտաքին գործերի մինիստրի որդին է (երկուսն ևս՝ հայր և որդի՝ իրանց առաջադիմութեամբ բացառապէս պարսկական են ռուսական կառավարութեան): Այդ երկուսը գլխաւորապէս և աշդուացին դրամական այն փոխառութիւնները, որ Պարսկաստանը կնքեց Ռուսաստանի հետ երկու անգամ: Այդ կուսակցութեան պարագային էր նախկին սաղաքամի Աթաբեկը, որը առաջ յայտնի էր իբրեւ անգլիասէր, իսկ ապա դարձաւ թունդ ռուսասէր և նրա օրով Ռուսաստանի ազդեցութիւնը Պարսկաստանի վրա անգլիկ էր: Բայց Աթաբեկը ընկաւ, թէ և նրա երկու օգնականները՝ Միլլա Րիզա խանը և Մուշիթ-Մուլլը միացին պաշտօնի մէջ և զեռ շարունակում են որոշ ծառայութիւններ մատուցանել ռուսասէր բանակին և քաղաքականութեան գործին:

Սաղաքամի պաշտօնին կոչվեց շահադէ էյն-Դովլէն, որի բռնած ուղղութիւնից էր կախված Պարսկաստանի ապագան:

Տեսնենք ինչ ուղղութեան հետեւեց նա:

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԱՍՏԱՆԻՑ

Ուրմիա, նոյեմբերի 24 ին
Պարսկաստանի քաղաքներից ոչ մէկը ազատ չը մնաց խօյրայից: Մինչև վերջին ժամանակներս շատերը մտածում էին, որ խօյրան Ուրմիա մուտք չի գործի, ի նկատի ունենալով Ուրմիայի հրաշալի օդը, շուրջ և այլ բնական յարմարութիւնները, բայց բոլորի յոյսերը և զեռը գործեց և մօտ մը ամիս է ինչ առատ զօնը է տանում ու գնալու համար էլ կարծես ամենին չէ մտածում և ուր գնա Ուրմիայից, արդէն ամեն տեղ այցելել է:

Սկզբում մեծողների թիւը հասնում էր օրական 25—30-ի, բայց նոյեմբերի 6-ից մինչև 15-ը պատահում էր և 250—30 հոգի, ի հարկէ, բոլորը պարսիկներից, շնորհիւ իրանց ապրտութեան և մոլեռանդութեան: Վերջին օրերս կարծես թէ սկսել է մեծողների թիւը պակասել, ինչպէս յոյս են տալիս բժիշկները, վերջնական վրա է հասնում մինչև հիմա գոհ են գնացել 2 հոգի մէկը պատուաստված, միւսը առանց պատուաստի, իսկ մի պատուաստված էլ, չը նայած որ վարակվել է, բայց շնորհիւ ձեռք առած միջոցների ազատվել է: Ասօրեաներից մեկը են 5 հոգի:

Պ. Օստերման

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՐՈՒՄՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ

7 դեկտեմբերի

ՏՕԿԻՐՈ, 6 դեկտեմբերի: (Բէյութը): Պօրտուգալից գեկուցանում են, որ «Պէրէսվէտի» վրա մակընթացութեան ժամանակ շուրջ հասնում էր մինչև ակադայինի ապարտանքները և լցնում էր ինչի գալէրէն: Նաև ծանծաղուտի վրա է: Միջիւ խողովակները ծակված են: Մակընթացութեան ժամանակ «Պօրտուգալի» խելի կամրակը ծակվում է շրով. անկասկած է, որ նա էլ թաղված է ծանծաղուտի մէջ, միայն թեղված չէ: «Բեյութիւնը» դուրսիւնս աւելի վրա է, քան «Պօրտուգալի»-ը: Սրա խելային կամրակը միշտ ջրի տակն է և 5 աստիճան թեղված է կողքի վրա: «Պօրտուգալի» խելի մասը կողքի վրա թեղվել է 5 աստիճան և մակընթացութեան ժամանակ նոյն դրութեան է ընկնում, ինչ որ «Պերսվէտի»-ն: Կանալի թաղված է ծանծաղուտում: «Բեյութը» կողքի վրա թեղվել է 15 աստիճան և ըստ երևոյթին նոյնպէս ծանծաղուտի մէջ է թաղված: Չորս գրահակներին և երկու կրէյսերներին բոլոր մարդիկը թողել հեռացել են:

ՏՕԿԻՐՈ, 6 դեկտեմբերի: Հրատարակված են Կիլիկիայի մի քանի կողմից յարձակման մասնաժամանակները: Եւրօպացիները սկզբում ստիպված էին յետ նահանջել ռուսների կատարի դիմադրութեան և գնդաձիգների զօրեղ կրակի պատճառով: Գնեթալ Սամէյան խրախուսում էր եւրօպացիներին, սպառնալով օտարական զօրքեր բերել տալ, որոնք կը խլեն մարտկոցն անելու փողով: Վերջապէս եւրօպացիները յարձակում գործեցին և գրաւեցին մարտկոցը: Հեռանալով դիմաց, ռուսները պայթեցին 4 ականներ: Մանջուրական բանակից հաղորդում են, որ դեկտեմբերի 4-ին երեկոյան ռուսները երբեք անգամ յարձակում գործեցին եւրօպական առաջաւոր պահակների վրա Սանտակունցուրի մօտ: Գիշերվայ մէկ ժամին ռուսները, արշաւանք գործելով, մօտեցան Մանիսուրգալունին և Տուզլուսաց-գէցգօրին: Գնեթալների 5-ին ցերեկվայ 2 ժամին ռուսները սկսեցին ռաբակովել եւրօպական դիրքերը երկաթուղիական կամուրջի մօտ Մուշիթի վրայով:

ՏՕԿԻՐՈ, 6 դեկտեմբերի: Կաթիլի եկեղեցում կայացաւ տեղական գերմանական դեսպանութեան կցորդ կոմս Հաքսթիլ-Տրախտէնբերգի պալատից Պարիզի Բերլինի եւրօպական նախկին դեսպան Կիլիկիայի Աօկիի աղվալ հետ:

Բէյութ, Գաշնակցական ժողովը հաստատութեան առաջադեց միջնորդ դատարանի վերաբերալ դաշնագրերին, որ նա կապի է դաշնագրի պետութիւնների հետ:

ՊԱՐԻԶ: Գօթերի, նախկին ինտենդանտ օֆիցերը Պարիզում, նախակված է 7-դ կօրպուսի շտաբի տրամադրութեան տակ:

8 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բարձրագոյն հրաման: «Անհրաժեշտ համարելով Հեռաւոր Արեւելքի մեր գինաւորված ոյժերի ուժեղացման համար պետերազմական գործիւն վերածել, լայնացնել և կազմակերպել մի քանի զինուորական մասեր և հաստատութիւններ Վարշավայի,

Վիենայի, Կիէվի, Կադանի, Մօսկվայի, Պետերբուրգի և Օդեսայի զինուորական շրջաններում, Մենք հրամայեցինք, այսօր Մեր տուած հրամանով յանուն զինուորական մինիստրի, այժմ իսկ անել Մեր ցուցմունքներով այդ մասին բոլոր անհրաժեշտ կարգադրութիւնները: Դրա հետ միասին հրամայում ենք 1) կոչել իսկական ծառայութեան, գործող զինուորական ցուցակի մասնաւոր փոփոխութեան համաձայն, գործի պահեստից հարկաւոր թւով զինուորներ ա) Վարշավայի զինուորական շրջանից, բ) Վիենայի զինուորական շրջանից, գ) Կիէվի զինուորական շրջանից, դ) Կադանի շրջանից, ե) Մօսկվայի շրջանից, զ) Պետերբուրգի զինուորական շրջանից, է) Օդեսայի զինուորական շրջանից: 2) կոչել իսկական ծառայութեան պահեստի բոլոր այն օֆիցերներին, որոնք պէտք է նշանակվեն գործերի և հաստատութիւնների պակասը լրացնելու»:

8 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Ներքին գործերի մինիստրը որոշեց երեք ամսով դադարեցնել «Вестник» լրագրի հրատարակութիւնը:

Թագաւոր Կայսրը բարեհաճեց ձեռք բերել նկարիչ Վերնազգինի ստորագրութիւնը կրող բոլոր նկարները, որոնք ի ցոյց էին դրված գեղարուեստների խրախուսման Կայսերական ընկերութեան մէջ:

Նոյեմբերի 30-ին Գօմէլից տրված հեռագրի առիթով բողոքներ ստացվեցին այնտեղի դատաստանական թղթակիցներից, թէ հրէաներից և թէ բրիտանացիներից, մեղադրելով, որ այդ հեռագրով զրպարտութիւն է տարածված այն հրէայ թղթակիցների մասին, որոնք գրում են հրէական դատար մասին: «Ռուսական հեռագրական գործակալութիւնը» իր պարզեցն է համարում յայտնել, թէ նա ոչ երբեք չէ ունեցել և չունի դիտաւորութիւն որ և է մէկին զրպարտել, որովհետեւ դա գործունէութեան ծրագրի մէջ չէ մտնում ընդհատաբար գնահատել առաջնակի դիտաւորները և հասարակական կեանքի երևոյթները: Գործակալութեան նպատակն է միայն՝ մամուլին յայտնել իր գործակալներից ստացած հեռագրական հաղորդակցութիւնները, որոնք թող չեն տրված գրաքննութիւնից: Իսկ գործակալներին տրված հրամանգի մէջ յատկապէս ասված է, որ գործակալները պարտաւոր են հեռագրել միմիայն օբյեկտիւ տեղեկութիւններ տեղի ունեցած դէպքերի մասին, և նրանք պատասխանատու են տեղեկութիւնների ճշգրտութեան և ժամանակակից լինելուն: Այս պատճառով նոյն նոյեմբերի 30-ին Գօմէլից ստացված հեռագրի բովանդակութեան պատասխանատուութիւնը ամբողջապէս ընկնում է տեղական գործակալի վրա: Իսկ այդ հեռագիրը լրագրում տպել կամ չը տպելը կախնուած էր պ. պ. խմբագիրների հայեցողութիւնից:

ՍՈՒԿԻՆԷՆ, 7 դեկտեմբերի: (Սեփ. թղթ.): Մոնախուգներ խումբը, բաղկացած մօտ 10,000 մարդուց, Լեռնայի գետի հովտում, որ գտնվում է եւրօպական օֆիցերների հրամանի տակ՝ երկու երրորդ մասով պակաս են այն պատճառով որ եւրօպացիները չը կատարեցին վարձելու պայմանը: Լուրեր են պտտում, թէ եւրօպացիները Մոնախուգում ամեն կերպով աշխատում են ազգաբնակչութիւնը Ռուսաստանի դէմ զրգռել:

ՏՕԿԻՐՈ: «Տուրկուս» ընկեց «Նէգրէցի» շոգենաւը, որը գտնւում էր Վլադիվոստօկի Բըն-նութիւնը ցոյց տուեց մաքսանեղ առաքակաների մեծ քանակութիւն: Նա ուղարկվեց պրի-դային դատարանը Սասիբօ: Նախ ազգութիւնը անյայտ է: Գնեթալների 6-ին «Ասա-մին» պահականաւոր ընկեց անգլիական մի շոգենաւ, որ փորձում էր դուրս գալ Պօրտուգալից: Ենթադրում են, որ այդ շոգենաւով ուսուստ էր բերված: Նրա վրա գտնվում էին ռուսաց ծովային օֆիցերներ, որոնք յոյս ունէին պատուել անցնել և միանալ բալտիկական էսկադրայի հետ: Շոգենաւը կուղարկվի Սասիբօ, ուր կը կատարվի ընտելութիւն:

ՍԻՆԳԱՊՈՐ: (Բէյութը): Ռուսական կառավարութեան գործակալը ամուսն գնելու մասին, Գինաւորը գտնվում է այստեղ և փորձում է ձեռք բերել ամուսն բալտիկական էսկադրայի համար: Ենթադրում են, որ էսկադրաները կը միանան Պապանայի մօտ, Սուվատայի ա-րեւմտեան ափում, իսկ յետոյ ռուսական էսկադրան կանցնէ Զօնդի նեղուցով: Մեծ բրիտանական կառավարութիւնը նախազգուշացրեց առեւտրականներին վստահ չմտնել, եթէ նրանք փորձեն պաշար հայթայթել ռուսական էսկադրայի:

ՅՕՆԳԱՆԳ: «Բէյութը» գործակալութիւնը իմացաւ, որ եւրօպական մի զօրեղ էսկադր-

